ՄԻ ՅԻՒՐ.– (Հանկարծ նայելով դէպի ձախ) Էհ ո՞վ է, ի՞նչ մարդ է,

ԲՈԼՈՐԸ.– (Հարբած ձայնով) Ի՞նչ է…

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ.– (Անտառի խորքից աջից) Ա՛ման, հասէք, ի՞նչ բանի էք:

ԲՈԼՈՐԸ.– (Անհանգիստ) Ի՞նչ կա…

ԳԻՒՂԱՑԻ.– (Ներս ընկնելով) Ա՛ման, հասէք, վագր է լուս ընկել անտառը:

ԹԱՄԱԴԱ.– (Քահ-քահ ծիծաղում է) «Վա՛գր է լուս ընկել»:

ԲՈԼՈՐԸ.– (Նոյնպէս ծիծաղում են) «Վա՛գր է լուս ընկել»:

ԳԻՒՂԱՑԻ.– (Շփոթուած) Ինչի՞ էք ծիծաղում, Բան եմ ասում, վագր է լուս ընկել անտառը…

ԹԱՄԱԴԱ.– (Հանգիստ ժպիտով) Լուս է ընկել, թող ընկնի… Նազարն էստեղ չի՞, վագրի հոգեառը:

ԳԻՒՂԱՑԻ.– Ի՞նչ Նազար, ի՞նչ զառաֆաթ… շէները փչացրէք, հասէք…

ՍԱՔՈ.– (Հազում է եւ վեր կենալով կամաց-կամաց մօտենում է ձախ մուտքին եւ հանկարծ փախչում:)

ՆԱԶԱՐ.– (Դեպի դուրս) Գեադա՛: Ջո՛ւր տուէք ձիուս: Էս է վեր կացա: (Գիւղացուն) Ո՞րտեղացի ես, բարեկամ:

ԳԻՒՂԱՑԻ.– Քեալլագեոզ գեղից:

ՆԱԶԱՐ.– (Գլուխը ծանր շարժելով) Հա՛: Ի՞նչ է, ի՞նչ վագր է: Որտե՞ղ է, եւ ո՞նց է սիրտ արեւ մտնի ձեր անտառը:

ԳԻՒՂԱՑԻ.– Մեր անտառը չի, էս անտառն է մտել, ու հիմի գալիս է…

ՆԱԶԱՐ.– (Վեր թռչելով եւ հազալով) Գեադա՞:

ԹԱՄԱԴԱ.– Հը՞, Քաջ Նազար, էսպէս բաներ սիրում ես: Տեսա՞ր ոնց բախտդ բանեց:

ՆԱԶԱՐ.– Սիրում եմ… (Մտահոգ ման է գալիս) Բը՛, բը՛, բը՛, բը՛… (Գիւղացուն) Ո՞ր կողմից է գալիս, գեադա…

ԳԻՒՂԱՑԻ.– (Աջ կողմը ցոյց տալով) Էս կողմից:

ՆԱԶԱՐ.– (Բարձր հազալով վեր է կենում եւ պատրաստւում է փախչելու) Կայծե՛րդ կհանեմ, հա՛ա՛ա՛… (Փախչում է ձախ կողմից:)

ԲՈԼՈՐԸ.– Ո՞ւր է գնում, ո՞ւր է գնում,

ԹԱՄԱԴԱ.– (Ձախ կողմից) Վագրի ճամփան է ուզում բռնի:

Ի՞նչ անշնորհքն էք: Դո՛ւք բռնեցէք, նա գնա վագրի վրայ: Դե՛սն էկէք:

Գիւղացիները վազում են դէպի ձախ եւ մտնում են Նազարի քամակը եւ պատի պէս արգելում նրան փախչելու: Քաջ Նազար, դու վագրի վրայ գնա, մենք կբռնենք վագրի ճամփան:

ՁԱՅՆԵՐ.– (Ձախից) Գալի՛ս է, գալի՛ս է…